ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2

№ ԷԱՃԱՊՁԲ-7/6-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 17-ը մարտի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Վասիլյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 08.01.2019թ. կնքված № ԷԱՃԱՊՁԲ-7/6-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 4 981 986 (չորս միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Աճառյան 2 նրբ., 4
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀԷԲ, Խորհրդային բաժանմունք
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 163078100597
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 00801378
ՀՎՀՀ 02522157	Տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտ պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ՎԱՍԻԼՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ապրանքի մատակարարումը 2020թ. ըստ ամիսների		
						ապրիլ	մայիս	հունիս
1	Աղ, կերակրի, մանր	կգ	102	24 421	2 490 942	10 000	10 000	4 421
2	Աղ, կերակրի, մանր	կգ	102	24 422	2 491 044	10 000	10 000	4 422
Ընդհանուր գումարը՝ ՀՀ դրամ	4 981 986 (չորս միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր ութսունվեց)							

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ									
		CPV-ի կոդը	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Աղ, կերակրի, մանր	15872400/1	1 020 000	2 040 000	2 490 942	2 490 942	2 490 942	2 490 942	2 490 942	2 490 942	2 490 942
2	Աղ, կերակրի, մանր	15872400/2	1 020 000	2 040 000	2 491 044	2 491 044	2 491 044	2 491 044	2 491 044	2 491 044	2 491 044

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտ պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ
Տնօրեն

Ա. ՎԱՍԻԼՅԱՆ